ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19 սեպտեմբերի 2018թ. **N 67-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) 2018 թվականի հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 5-րդ կետով սահմանված կարգով,

2) 2018 թվականի հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 16-ական,

«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք (….)՝ 9-ական,

«Ելք» կուսակցությունների դաշինք (ԵԼՔ)՝ 2 –ական,

Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)՝ 2-ական:

2. 2018 թվականի հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Դալար	12/1	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Դալար	12/2	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Վերին Դվին	12/3	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Դաշտ	14/1	ՀՀԿ	ՀՅԴ
Ծաղկունք	14/2	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Շահումյանի թռչնաֆաբրիկա	14/3	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Գեղակերտ	15/1	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Գեղակերտ	15/2	ՀՀԿ	ՀՅԴ
Լեռնամերձ	15/3	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Արեվադաշտ	16/1	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Բաղրամյան (Բաղրամյան)	16/2	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Բերքաշատ	16/3	ՀՀԿ	ԵԼՔ
Գետաշեն	16/4	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Շենավան	16/5	ԵԼՔ	ՀՀԿ
Ձրաշեն	16/6	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Հացաշեն	18/1	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Նոր Ամանոս	18/2	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Վերին Սասնաշեն	18/3	ՀՀԿ	ՀՀԿ
Դդմաշեն	20/1	ՀՀԿ	ՀՀԿ
Մաքենիս	21/1	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Ներքին Գետաշեն	21/2	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Ներքին Գետաշեն	21/3	ՀՀԿ	ԾԱՌՈՒԿՅԱՆ
Ներքին Գետաշեն	21/4	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Ներքին Գետաշեն	21/5	ՀՀԿ	ՀՀԿ
Անտառաշեն	24/1	ԾԱՌՈՒԿՅԱՆ	ՀՀԿ
Լուսակերտ	33/1	ԵԼՔ	ՀՀԿ
Հովտաշեն	33/2	ՀՀԿ	ԵԼՔ
Սարիգյուղ	37/1	ՀՅԴ	ՀՀԿ
Լուսահովիտ	38/1	ՀՅԴ	ՀՀԿ

3. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2018 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև սեպտեմբերի 26-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**